

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԸՆՏԱՆԻՔԻ, ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Աշխատանքների կազմակերպման առաջին նախապայմանը ոլորտի տեղեկատվական տվյալների շտեմարանի թարմացումն է, որը բաժնի կողմից իրականացվում է յուրաքանչյուր տարվա հունվար-փետրվար ամիսներին, համաձայն որի 2014 թվականի փետրվարի 1-ի դրությամբ մարզում բնակվում է 58 784 մարդ, որից տղամարդ ` 29 250, կին` 29534, երեխաները կազմում են մարզի ազգաբնակչության 24 տոկոսը, կամ 14.108 երեխա:

Մարզում հաշվառված է 17 132 ընտանիք, որից բազմանդամ / 7 և ավելի շունչ ունեցող ` 604, բազմազավակ` 159 / 4 և ավելի երեխա / : 1-ին կիսամյակի ընթացքում մարզում ծնվել է 315 երեխա: Մարզում զգալի թիվ են կազմում կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երիտասարդները / 245 երեխա /, որոնցից մանկուց հաշմանդամ կամ հաշմանդամ դարձած երեխաները 143-ն են: Վերոհիշյալ երեխաների մասին տեղեկատվությունը գրանցված է աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության << ՄԱՆՈՒԿ >> տեղեկատվական կենտրոնի կայք էջում: Նրանց շահերի և իրավունքների պաշտպանության նպատակով 1-ին կիսամյակի ընթացքում կազմակերպվել է 46 տունայց, որի ընթացքում կատարվել է այդ երեխաների կրթական, իրավական սոցիալական կարիքների գնահատում, կազմվել սոցիալ վերականգնողական անհատական ծրագրեր: Համաձայն <<Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության մասին>> ՀՀ օրենքի 14 և 15 –դ հոդվածների պահանջների 1-ին կիսամյակի ընթացքում վկայագրվել և վերավկայագրվել են մարզի 33 երեխաներ, որոնք տարբերակված ուսուցում կստանան մարզի ներառական կրթություն իրականացնող և հանրապետության հատուկ դպրոցներում:

2014թ. հունիսի 30-ի դրությամբ մարզում ներառական կրթություն է ստանում 87 երեխա, 4 –ը տնային պայմաններում, 10`ը հատուկ դպրոցներում: Մարզի տարածքում բնակվող տարբեր պատճառներով առանց ծնողական խնամքի մնացած 50 երեխաների նկատմամբ սահմանվել է խնամակալություն և հոգաբարձություն: 2014 թ. խնամակալություն է սահմանվել է 3 երեխայի նկատմամբ, նրանց վերաբերյալ տեղեկատվությունը համաձայն ՀՀ Ընտանեկան օրենսգրքի 109-111 հոդվածների ներկայացվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն` կենտրոնացված հաշվառման վերցնելու համար: Համաձայն բաժնի կողմից ներկայացված փաստաթղթերի, առանց ծնողական խնամքի մնացած 3 երեխաներ ընդգրկված են ՀՀ ԱՍՀՆ բնակարանի կարիք ունեցող երեխաների ցանկում: 2014թ. 1-ին կիսամյակի ընթացքում մանկատուն երեխա չի ուղարկվել: Գիշերօթիկ

հաստատություն է ուղարկվել 1, կենսաբանական ընտանիք է վերադարձել 1 երեխա: Ոստիկանության հետ համագործակցության արդյունքում կրճատվել է անչափահաս իրավախախտ երեխաների թիվը, 1-ին կիսամյակում գրանցվել է ընդամենը 2 երեխա, հաշվառումից հանվել է 2-ը: Այժմ մարզում հաշվառված է 7 երեխա: Ոստիկանության տարածքային բաժինների ԱԳ խմբերի հետ համատեղ բաժինը պրոֆիլակտիկ աշխատանքներ է տանում մարզում անչափահասների կողմից իրավախախտումների կանխարգելման և գրանցված երեխաների զբաղվածության խնդիրները լուծելու և նրանց նկատմամբ հսկողություն իրականացնելու ուղղությամբ:

Մարզում զգալի թիվ են կազմում ամուսնալուծված ընտանիքները, որոնց հակասությունների արդյունքում տուժում են երեխաները: 1-ին կիսամյակի ընթացքում բաժնի կողմից մեծ աշխատանք է տարվել երեխաների իրավունքների պաշտպանության և ծնողների կողմից նրանց իրավունքների ոտնահարումը կանխարգելելու ուղղությամբ, պայմաններ ստեղծվել երեխայի հետ չապրող ծնողի կողմից ծնողական իրավունքների իրականացման համար :

Ծանրի պետական գրանցում չունեող երեխաների բացահայտման համար բաժինը 2014 թվականի մայիսին շրջաբերական նամակով դիմել է համայնքի ղեկավարներին, իրենց համայնքներում նման դեպքերը բացահայտելու և <<Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին>> ՀՀ օրենքի 14-21 հովածների հիմքերով նման երեխաներին գրանցմանը աջակցելու համար: Հունիսի 30-ի դրությամբ այդպիսի երեխաներ մարզում չեն բացահայտվել, մանկական մահացության դեպքեր չեն գրանցվել:

Զգալի աշխատանքներ են կատարվել մարզի համայնքներում գարծող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների աշխատանքների կանոնակարգման և մեթոդական օգնության ուղղությամբ: 4 համայնքներում կազմակերպվել է մոնիթորինգ, համայնքների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներին / ԽՀՀ / է տրամադրվել անհրաժեշտ գրականություն և կազմակերպվել սեմինար:

Ակտիվ աշխատանքներ են կատարվել մարզում պետական գենդերային քաղաքականության իրականացման ուղղությամբ, կազմակերպվել են հանդիպումներ, թոք-շոուներ, սեմինարներ:

Մարզում ընտանեկան բռնության, կանանց և երեխաների թրաֆիկինգի, անտեսման, անչափահասների շահագործման դեպքեր չեն գրանցվել:

1-ին կիսամյակի ընթացքում բաժինը համագործակցել և իրավական, մեթոդական աջակցություն է ստացել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության / ԱՍՀՆ / և ոլորտի հիմնախնդիրներով զբաղվող միջազգային կազմակերպությունների կողմից: